

Գրանցված է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
արդարադատության նախարարության կողմից  
2015 թվականի հունվարի 29-ին  
Պետական գրանցման համարը 3001537



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունվարի 2015թ.

N 24 -Ն

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ, ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի ԹԻՎ 34/115, 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի ԹԻՎ 35/131 ԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի ԹԻՎ 39/156 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը **որոշում է**.

1. Ընդունել՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կանոնակարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) տարածքային ընտրական հանձնաժողովի կանոնակարգը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետևյալ որոշումները.

1) 2007 թվականի մայիսի 23-ի «Տարածքային ընտրական հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 34/115.

2) 2007 թվականի մայիսի 30-ի «Տեղամասային ընտրական հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 35/131.

3) 2007 թվականի հուլիսի 6-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 39/156:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՆԱԽԱԳԱՀ

Ս.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ  
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ**

**ԳԼՈՒԽ 1**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) ընտրություններ և հանրաքվեներ (այսուհետ՝ ընտրություններ) կազմակերպող և ընտրությունների օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող պետական մարմին է:

2. Հանձնաժողովը գործում է մշտական հիմունքներով՝ օրինականության, կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

3. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքով (այսուհետ օրենսգիրք), այլ օրենքներով և իրավական ակտերով, սույն կանոնակարգով:

4. Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում ընդունում է նորմատիվ և անհատական իրավական ակտեր, որոնք ենթակա են պարտադիր կատարման հանրապետության ողջ տարածքում:

5. Հանձնաժողովի անունից պաշտոնական տեղեկատվություն և (կամ) մամուլի հաղորդագրություն տալիս են Հանձնաժողովի նախագահը և Հանձնաժողովի մամուլի քարտուղարը կամ Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ՝ Հանձնաժողովի անդամը:

6. Հանձնաժողովի կրճատ անվանումն է՝ ԼՂՀ ԿԸՀ:

7. Հանձնաժողովն ունի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, դրոշմակնիք, ձևաթուղթ, Հանձնաժողովի գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ անհատականացման այլ միջոցներ:

8. Հանձնաժողովի գտնվելու վայրն է՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Մասունցի Դավթի 2:

**ԳԼՈՒԽ 2**

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

9. Նոր Հանձնաժողովը կազմավորվում է նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանին հաջորդող հերթական նստաշրջանի բացման օրվանից հետո՝ 60-րդ օրը:

Նոր Հանձնաժողովը համարվում է կազմավորված, եթե նշանակվել է նրա անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը: Եթե մինչև նոր Հանձնաժողովի կազմավորման վերջին օրը Հանձնաժողովի կազմավորման համար անհրաժեշտ անդամների նվազագույն թիվը չի նշանակվել, ապա այն մինչև սահմանված նվազագույն թիվը լրանալը նշանակում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահը (այսուհետ՝ Հանրապետության Նախագահ):

10. Հանձնաժողովը կազմավորվում է՝

1) Հանրապետության Նախագահի նշանակած երեք անդամից.

2) Ազգային ժողովում խմբակցություն ունեցող յուրաքանչյուր կուսակցության մշտապես գործող մարմնի որոշմամբ, իսկ դաշինքի դեպքում՝ դաշինքի անդամ կուսակցությունների մշտապես գործող մարմինների համատեղ՝ ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ նշանակված մեկական անդամից:

Եթե Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների և դաշինքների թիվը չի գերազանցում երեքը, ապա յուրաքանչյուր կուսակցություն և դաշինք նշանակում է Հանձնաժողովի երկուական անդամ:

Եթե մինչև Հանձնաժողովի ձևավորման համար ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետում, սույն կետի 2-րդ ենթակետի պահանջներին համապատասխան, որևէ կուսակցություն (դաշինք) թեկնածու չի նշանակում, ապա հանձնաժողովի թափուր տեղը լրացնում է համապատասխան խմբակցությունը:

11. Սույն հավելվածի 10-րդ կետում նշված պաշտոնատար անձանց և մարմինների առաջարկությունների հիման վրա Հանձնաժողովի կազմը՝ առաջարկությունը ներկայացնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, սահմանվում է Հանրապետության Նախագահի հրամանագրով:

12. Հանձնաժողովի անդամների թեկնածուների տվյալները Հանրապետության Նախագահի աշխատակազմ ներկայացվում են Հանձնաժողովի անդամի լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան 30 և ոչ ուշ, քան 20 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն: Հանձնաժողովի անդամի լիազորությունների ավարտի ժամկետի մասին սույն հավելվածի 10-րդ կետում նշված պաշտոնատար անձանց և մարմիններին տեղեկացնում է Հանձնաժողովի նախագահը՝ Հանձնաժողովի անդամի լիազորությունների ավարտից ոչ ուշ, քան 50 օր առաջ:

13. Հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում թափուր տեղը համալրվում է 21-օրյա ժամկետում: Հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման դեպքում Հանձնաժողովի նոր անդամը նշանակվում է լիազորությունները վաղաժամկետ դադարած կամ դադարեցված անդամի պաշտոնավարման համար սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածի համար:

14. Հանձնաժողովի նախագահին, նախագահի տեղակալին և Հանձնաժողովի քարտուղարին ընտրում է Հանձնաժողովն իր կազմից:

15. Հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի և Հանձնաժողովի քարտուղարի թեկնածուների առաջադրման իրավունքը պատկանում է Հանձնաժողովի անդամներին:

16. Հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը և Հանձնաժողովի քարտուղարը քվեարկությամբ ընտրվում են Հանձնաժողովի առաջին նիստում:

Հանձնաժողովի առաջին նիստը կայանում է Հանրապետության Նախագահի համապատասխան հրամանագրի հրապարակման հաջորդ օրը՝ ժամը 12.00-ին և կարող է ընթանալ մինչև նույն օրվա ժամը 24.00-ն, Հանձնաժողովի վարչական շենքում: Առաջին նիստը վարում է Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

Եթե Հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի կամ Հանձնաժողովի քարտուղարի պաշտոնի համար քվեարկվել է մեկ թեկնածու, ապա նա ընտրվում է, եթե ստացել է քվեարկության մասնակիցների ձայների կեսից ավելին: Եթե Հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի կամ Հանձնաժողովի քարտուղարի պաշտոնի համար քվեարկվել է մեկից ավելի թեկնածու, ապա ընտրվում է առավել թվով կողմ ձայներ ստացած թեկնածուն: Ձայների հավասարության դեպքում առավել թվով կողմ ձայներ ստացած թեկնածուների միջև անցկացվում է վիճակահանություն:

17. Հանձնաժողովի նախագահ առաջին նիստում սահմանված կարգով չընտրվելու դեպքում, երրորդ ժամկետում, Հանձնաժողովի նախագահին նշանակում է Հանրապետության Նախագահը՝ Հանձնաժողովի անդամներից:

18. Հանձնաժողովի աշխատանքային օրերն ու ժամերը սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ, բացառությամբ համապետական ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցով նախատեսված առանձին գործառույթների համար սահմանված ժամկետների:

### ԳԼՈՒԽ 3

#### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

19. Հանձնաժողովի նախագահը՝

- 1) կազմակերպում և ղեկավարում է Հանձնաժողովի աշխատանքները.
- 2) սահմանում է հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը.
- 3) վարում է Հանձնաժողովի նիստերը.
- 4) հրավիրում է Հանձնաժողովի արտահերթ նիստ.
- 5) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ընդունում է անհատական որոշումներ և կարգադրություններ, օրենսգրքի միատեսակ կիրառման վերաբերյալ հրահանգներ.
- 6) անցկացնում է խորհրդակցություններ, որոնք կարող են համառոտ արձանագրվել.
- 7) ստորագրում է Հանձնաժողովի որոշումները, նիստերի և խորհրդակցությունների արձանագրությունները, Հանձնաժողովի ելից փաստաթղթերը.
- 8) վերահսկում է Հանձնաժողովի ընդունած որոշումների կատարման ընթացքը.
- 9) տեղեկացնում է Հանձնաժողովի անդամների թեկնածուներ առաջադրելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց Հանձնաժողովի անդամի լիազորությունների ավարտի ժամկետի մասին.

10) հաստատում է ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների անցկացման ժամանակացույցը.

11) ընդունում է պատվիրակություններ և հյուրեր, կազմում պատվիրակություններ.

12) ներկայացնում է Հանձնաժողովը.

13) հաստատում է Հանձնաժողովի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) կառուցվածքը, սահմանում պաշտոնային դրույքաչափեր.

14) նշանակում և ազատում է Աշխատակազմի աշխատողներին, Հանձնաժողովի նախագահի օգնականին և Հանձնաժողովի մամուլի քարտուղարին.

15) իրականացնում է Աշխատակազմի ընթացիկ գործունեության վերահսկողությունը.

16) իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

20. Հանձնաժողովի նախագահի տեղակալը՝

1) փոխարինում է Հանձնաժողովի նախագահին նրա հանձնարարությամբ կամ բացակայության ընթացքում.

2) Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ իրականացնում է Հանձնաժողովի նախագահին վերապահված որոշակի լիազորություններ.

3) կազմակերպում է Հանձնաժողովում ստացված դիմումների, բողոքների հետ տարվող աշխատանքը:

21. Հանձնաժողովի նախագահի տեղակալի բացակայության ընթացքում նրա լիազորությունները Հանձնաժողովի նախագահի կողմից կարող են դրվել Հանձնաժողովի քարտուղարի կամ Հանձնաժողովի անդամի վրա:

22. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) նախապատրաստում է Հանձնաժողովի նիստերը.

2) կազմում և ստորագրում է Հանձնաժողովի նիստի օրակարգը.

3) տեղեկացնում է Հանձնաժողովի անդամներին նիստի օրակարգի հարցերի մասին.

4) ապահովում է Հանձնաժողովի նիստերի հրապարակայնությունը.

5) Հանձնաժողովի նիստերի օրակարգի մասին տալիս է պարզաբանումներ.

6) ստորագրում է Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

7) կազմակերպում է Հանձնաժողովի որոշումների ուղարկումն ըստ պատկանելության.

8) կազմակերպում է ընտրական փաստաթղթերի ստացման, պահպանման և օրենսգրքով սահմանված դեպքերում՝ արխիվացման աշխատանքները:

23. Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ Հանձնաժողովի քարտուղարն իրականացնում է Հանձնաժողովի նախագահին վերապահված որոշակի լիազորություններ:

24. Հանձնաժողովի քարտուղարի բացակայության ընթացքում նրա լիազորությունները Հանձնաժողովի նախագահի կողմից կարող են դրվել նախագահի տեղակալի կամ Հանձնաժողովի անդամի վրա:

25. Հանձնաժողովի անդամն իրավունք ունի՝

1) նախապես ծանոթանալու Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող հարցերին և փաստաթղթերին.

2) ելույթ ունենալու Հանձնաժողովի նիստում.

3) ներկայացնելու առաջարկություններ և պահանջելու, որ այդ առթիվ անցկացվի քվեարկություն.

4) նիստի մասնակիցներին տալու հարցեր, ստանալու պատասխաններ.

5) Հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով, մասնակցելու տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների նիստերին, իսկ քվեարկության օրը՝ ներկա լինելու քվեարկության սենյակում.

6) ծանոթանալու ստացված դիմումներին, բողոքներին, գրություններին և մյուս փաստաթղթերին.

7) հայտնել ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման վերաբերյալ իր կարծիքը.

8) Աշխատակազմից ստանալ մասնագիտական, խորհրդատվական, տեխնիկական և այլ բնույթի օժանդակություն:

26. Հանձնաժողովի անդամը պարտավոր է՝

1) կատարել Հանձնաժողովի նախագահի՝ իր իրավասության սահմաններում տրված հանձնարարությունները.

2) մասնակցել Հանձնաժողովի աշխատանքներին և կատարել իր լիազորությունները.

3) մասնակցել Հանձնաժողովի նիստերին և քվեարկությանը.

4) կազմակերպել Հանձնաժողովի քննարկմանն իր կողմից ներկայացվող հարցերի նախապատրաստումը:

#### **Գ Լ ՈՒ Յ 4**

#### **ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

27. Հանձնաժողովի հերթական նիստերն անցկացվում են Հանձնաժողովի նախագահի սահմանած ժամանակացույցով՝ օրակարգում հարցեր ներառված լինելու դեպքում:

28. Արտահերթ նիստ հրավիրվում է՝

1) Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ,

2) Հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդի գրավոր պահանջով՝ նրանց նշած ժամկետում:

29. Նիստին Հանձնաժողովի անդամների մասնակցությունը նշվում է նիստերի գրանցամատյանում, որտեղ յուրաքանչյուրը ստորագրում է իր ազգանվան դիմաց:

30. Նիստերն անցկացվում են Հանձնաժողովի վարչական շենքում կամ մամլո կենտրոնում, իսկ անհաղթահարելի խոչընդոտների դեպքում, երբ անհնար է նիստը հետաձգել, Հանձնաժողովի անդամների կեսից ավելիի համաձայնությամբ՝ այլ վայրում:

31. Նիստի օրակարգը կազմում է Հանձնաժողովի քարտուղարը՝ Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ և համաձայնությամբ:

32. Նիստի օրակարգում լրացուցիչ հարցեր ընդգրկվում են Հանձնաժողովի նախագահի կողմից կամ Հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդի պահանջով:

33. Նիստի օրակարգում, Հանձնաժողովի անդամներից բացի, հարցեր կարող է ներկայացնել վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավարը՝ ծառայությանը վերապահված իրավասության շրջանակներում:

34. Նիստին ներկա լինելու իրավունք ունեցողներից բացի կարող են հրավիրվել՝

1) Աշխատակազմի աշխատակիցները.

2) այլ անձինք:

35. Հանձնաժողովի անդամները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, դիտորդները, վստահված անձինք վերնազգեստի վրա պարտադիր կարգով տեսանելի ձևով պետք է կրեն նիստում ներկա լինելու իրավունքը հավաստող վկայական:

36. Նիստում ներկա լինելու իրավունք ունեցող անձինք կարող են մասնակցել համապատասխան հարցի քննարկմանը միայն նիստը վարողի թույլտվությամբ:

37. Նիստի օրակարգում ընդգրկված հարցերի որոշման նախագծերը Հանձնաժողովի անդամներն ստանում են Հանձնաժողովի նիստերի դահլիճում՝ նիստն սկսվելուց առնվազն երկու ժամ առաջ:

38. Նիստին ներկա լինելու իրավունք ունեցող անձանց տրվում է նիստի օրակարգը: Նրանք իրավունք ունեն ծանոթանալու ներկայացվող որոշումների նախագծերին:

## ԳԼՈՒԽ 5

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

39. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա է Հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Նիստը վարում է Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա հանձնարարության կամ բացակայության դեպքում՝ նախագահի տեղակալը:

40. Նիստը սկսվում է օրակարգի հաստատումով: Մինչև օրակարգի հաստատումն այլ հարցեր չեն քննարկվում: Օրակարգի հարցերի վերաբերյալ առարկությունն լինելու դեպքում առաջարկությունը դրվում է քվեարկության:

41. Նիստ վարողը, ընթերցում է օրակարգի հարցերը, անհրաժեշտության դեպքում տալիս պարզաբանումներ, աշխատանքի արդյունավետությունից ելնելով՝ փոխում օրակարգի հարցերի քննարկման հերթականությունը:

42. Նիստում հարցերը քննարկվում են հետևյալ հաջորդականությամբ՝

1) որոշման նախագիծը ներկայացնողի զեկուցում.

2) հարցեր զեկուցողին.

3) առաջարկություններ.

4) ելույթներ՝ մինչև հինգ րոպե, իսկ նիստը վարողը՝ մինչև յոթ րոպե.

5) քվեարկություն:

43. Նիստ վարողը՝

1) ելույթների համար, ըստ հերթականության, ձայն է տալիս Հանձնաժողովի անդամներին.

2) զգուշացում է անում սույն կանոնակարգը խախտողին.

3) ուղղում է ելույթներում տեղ գտած փաստական սխալները.

4) ձայն է տալիս հրավիրված անձանց, նիստը խանգարելու դեպքում՝ զրկում խոսքից, նիստը խանգարողներին հեռացնում նիստերի դահլիճից:

44. Նիստում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկությունը կատարվում է հարցի քննարկման ավարտից հետո:

45. Նիստ վարողն ամփոփում է քննարկումը և քվեարկությունից առաջ ներկայացնում որոշման նախագծի վերաբերյալ արված դիտողություններն ու առաջարկությունները:

Դրանք զեկուցողի կողմից ընդունվելու դեպքում հարցը քվեարկության է դրվում՝ հաշվի առնելով արված դիտողություններն ու առաջարկությունները:

46. Առաջարկությունները զեկուցողի կողմից չընդունվելու և առաջարկության հեղինակի կողմից ներկայացված տարբերակը պնդելու դեպքում առաջարկություններն առանձին-առանձին դրվում են քվեարկության: Քվեարկության արդյունքում ընդունված առաջարկություններն ընդգրկվում են որոշման նախագծում, և նախագիծը քվեարկության է դրվում ընդունված առաջարկություններով:

47. Յուրաքանչյուր քվեարկությունից առաջ նիստ վարողը կրկնում է քվեարկության դրվող հարցը՝ ճշգրիտ ձևակերպմամբ, հաշվում և բարձրաձայն հայտարարում կողմ կամ դեմ քվեարկած Հանձնաժողովի անդամների թիվը:

48. Քվեարկությունը կարող է կրկնվել, եթե ինչ-որ կերպ խանգարվել է Հանձնաժողովի որևէ անդամի քվեարկությունը:

49. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են Հանձնաժողովի իրավագոր նիստում՝ բաց քվեարկությամբ: Հանձնաժողովի անդամը քվեարկում է անձամբ՝ կողմ կամ դեմ:

Հանձնաժողովը կարող է ընդունել հարցումով որոշումներ, որոնք ստորագրում են կողմ քվեարկած Հանձնաժողովի անդամները:

50. Որոշումն ընդունվում է, եթե կողմ է քվեարկել նիստին ներկա Հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին, բացառությամբ օրենսգրքով սահմանված դեպքերի:

51. Քվեարկության արդյունքների հիման վրա նիստը վարողը հայտարարում է որոշումն ընդունվելու կամ չընդունվելու մասին:

52. Նիստը համառոտ արձանագրվում է:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ  
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՃՆԱԺՈՂՈՎԻ**

**ԳԼՈՒԽ 1**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Տարածքային ընտրական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) մշտական հիմունքներով գործող պետական մարմին է:
2. Հանձնաժողովը գործում է օրինականության, կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա:
3. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքով (այսուհետ՝ օրենսգիրք), Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով, իրավական այլ ակտերով և սույն կանոնակարգով:
4. Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում ընդունում է անհատական իրավական ակտեր:
5. Հանձնաժողովն ունի կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հաստատված նմուշին համապատասխան կնիք, կարող է ունենալ ձևաթուղթ, իր գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ անհատականացման այլ միջոցներ:

**ԳԼՈՒԽ 2**

**ՀԱՆՃՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

6. Հանձնաժողովի անդամները նշանակվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների կողմից՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի մեկ անդամ՝ Հանձնաժողովի մեկ անդամ սկզբունքով:
7. Հանձնաժողովը կազմավորվում և իր լիազորություններն ստանձնում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից իր լիազորություններն ստանձնելու պահից 15 օր հետո:
8. Հանձնաժողովը համարվում է կազմավորված, եթե նշանակվել է նրա անդամների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդը: Եթե մինչև Հանձնաժողովի կազմավորման համար սահմանված ժամկետում Հանձնաժողովի կազմավորման համար անհրաժեշտ անդամների նվազագույն թիվը չի նշանակվել, ապա այն մինչև սահմանված նվազագույն թիվը լրանալը նշանակում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը:
9. Հանձնաժողով կազմավորող մարմինների առաջարկությունների հիման վրա Հանձնաժողովի կազմը՝ առաջարկությունը ներկայացնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում, հրապարակում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը:
10. Հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում է Հանձնաժողովի նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ Հանձնաժողովի նախագահի տեղակալը:
11. Հանձնաժողովի նախագահին, նախագահի տեղակալին և Հանձնաժողովի քարտուղարին ընտրում է Հանձնաժողովը՝ իր կազմից՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի և հանձնաժողովի քարտուղարի ընտրության համար սահմանված կարգով, Հանձնաժողովի առաջին նիստում:



12. Հանձնաժողովի առաջին նիստը կայանում է Հանձնաժողովի կազմավորումից հետո՝ երկօրյա ժամկետում, Հանձնաժողովի վարչական շենքում: Նիստը հրավիրում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը, իսկ վարում է Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

13. Սահմանված կարգով և ժամկետում Հանձնաժողովի նախագահ չընտրվելու դեպքում Հանձնաժողովի նախագահին նշանակում է կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը՝ տվյալ Հանձնաժողովի անդամներից, եռօրյա ժամկետում:

14. Հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում թափուր տեղը համալրում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ Հանձնաժողովի կազմավորման՝ սահմանված կարգով՝ 21-օրյա ժամկետում:

15. Հանձնաժողովի աշխատանքային օրերն ու ժամերը սահմանվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ, բացառությամբ ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցով նախատեսված առանձին գործառնությունների համար սահմանված ժամկետների:

### ԳԼՈՒԽ 3

#### ***ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼԻ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ***

16. Հանձնաժողովի նախագահը՝

- 1) կազմակերպում և ղեկավարում է Հանձնաժողովի աշխատանքները.
- 2) սահմանում է հերթական նիստերի անցկացման ժամանակացույցը.
- 3) վարում է Հանձնաժողովի նիստերը.
- 4) հրավիրում է Հանձնաժողովի արտահերթ նիստ.
- 5) պահանջում է հրավիրել տեղամասային ընտրական հանձնաժողովի արտահերթ նիստ.
- 6) անցկացնում է խորհրդակցություններ.
- 7) ստորագրում է Հանձնաժողովի որոշումները, նիստերի արձանագրությունները, Հանձնաժողովի ելից փաստաթղթերը.
- 8) վերահսկում է Հանձնաժողովի ընդունած որոշումների կատարման ընթացքը.
- 9) ներկայացնում է Հանձնաժողովը.
- 10) իրականացնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

17. Հանձնաժողովի նախագահի տեղակալը՝

- 1) փոխարինում է Հանձնաժողովի նախագահին նրա հանձնարարությամբ կամ բացակայության ընթացքում.
- 2) Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ իրականացնում է Հանձնաժողովի նախագահին վերապահված որոշակի լիազորություններ.
- 3) ապահովում է Հանձնաժողովում ստացված դիմումների, բողոքների հետ տարվող աշխատանքը:

18. Հանձնաժողովի նախագահի տեղակալի բացակայության ընթացքում նրա լիազորությունները Հանձնաժողովի նախագահի կողմից կարող են դրվել Հանձնաժողովի քարտուղարի կամ Հանձնաժողովի անդամի վրա:

19. Հանձնաժողովի քարտուղարը՝

- 1) նախապատրաստում է Հանձնաժողովի նիստերը.
- 2) կազմում և ստորագրում է Հանձնաժողովի նիստի օրակարգը.
- 3) տեղեկացնում է Հանձնաժողովի անդամներին նիստի օրակարգի հարցերի մասին.
- 4) ապահովում է Հանձնաժողովի նիստերի հրապարակայնությունը.
- 5) Հանձնաժողովի նիստերի օրակարգի մասին տալիս է պարզաբանումներ.
- 6) ստորագրում է Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.
- 7) կազմակերպում է Հանձնաժողովի որոշումների ուղարկումն ըստ պատկանելության.

8) կազմակերպում է ընտրական փաստաթղթերի ստացման, պահպանման և օրենսգրքով սահմանված դեպքերում՝ արխիվացման աշխատանքները:

20. Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ իրականացնում է Հանձնաժողովի նախագահին վերապահված որոշակի լիազորություններ:

21. Հանձնաժողովի քարտուղարի բացակայության ընթացքում նրա լիազորությունները Հանձնաժողովի նախագահի կողմից կարող են դրվել նախագահի տեղակալի կամ Հանձնաժողովի անդամի վրա:

22. Հանձնաժողովի անդամն իրավունք ունի՝

1) նախապես ծանոթանալու Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող հարցերին և փաստաթղթերին.

2) ելույթ ունենալու Հանձնաժողովի նիստում.

3) ներկայացնելու առաջարկություններ և պահանջելու, որ այդ առթիվ անցկացվի քվեարկություն.

4) նիստի մասնակիցներին տալու հարցեր, ստանալու պատասխաններ.

5) Հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու տեղամասային ընտրական հանձնաժողովների նիստերին, իսկ քվեարկության օրը՝ ներկա լինելու քվեարկության սենյակում.

6) ծանոթանալու ստացված դիմումներին, բողոքներին, գրություններին և մյուս փաստաթղթերին.

7) հայտնել ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման վերաբերյալ իր կարծիքը:

23. Հանձնաժողովի անդամը պարտավոր է՝

1) կատարել Հանձնաժողովի նախագահի՝ իր իրավասության սահմաններում տված հանձնարարությունները.

2) մասնակցել Հանձնաժողովի աշխատանքներին և կատարել իր լիազորությունները.

3) մասնակցել Հանձնաժողովի նիստերին և քվեարկությանը.

4) կազմակերպել Հանձնաժողովի քննարկմանն իր կողմից ներկայացվող հարցերի նախապատրաստումը:

#### **ԳԼՈՒԽ 4**

#### **ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ԶՐԱՎԻՐՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ**

24. Հանձնաժողովի հերթական նիստերն անցկացվում են Հանձնաժողովի նախագահի սահմանած ժամանակացույցով՝ օրակարգում հարցեր ներառված լինելու դեպքում:

25. Արտահերթ նիստ հրավիրվում է՝

1) Հանձնաժողովի նախագահի նախաձեռնությամբ.

2) Հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդի գրավոր պահանջով՝ նրանց նշած ժամկետում:

26. Նիստին Հանձնաժողովի անդամների մասնակցությունը նշվում է նիստերի արձանագրությունների և որոշումների գրանցամատյանում, որտեղ յուրաքանչյուրը ստորագրում է իր ազգանվան դիմաց:

27. Նիստերն անցկացվում են Հանձնաժողովի նստավայրում, իսկ անհաղթահարելի խոչընդոտների դեպքում, երբ անհնար է նիստը հետաձգել, Հանձնաժողովի անդամների կեսից ավելիի համաձայնությամբ՝ այլ վայրում:

28. Նիստերի օրակարգը կազմում է Հանձնաժողովի քարտուղարը՝ Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ և համաձայնությամբ:

29. Նիստի օրակարգում լրացուցիչ հարցեր ընդգրկվում են Հանձնաժողովի նախագահի կողմից կամ Հանձնաժողովի անդամների առնվազն մեկ երրորդի պահանջով:

30. Նիստերին կարող են ներկա լինել՝

1) զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները.

2) միջազգային և տեղական դիտորդները.

3) Հանձնաժողովի կողմից հրավիրված անձինք.

4) Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի, համայնքի ղեկավարի և ավագանու անդամի թեկնածուն՝ թեկնածուի գրանցման հարցը քննարկելիս, իսկ գրանցումից հետո՝ յուրաքանչյուր թեկնածուի, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների մեկական վստահված անձ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

5) դիմումատուն (բողոքներ կայացնողը)՝ իր դիմումի (բողոքի) քննարկման ժամանակ:

31. Հանձնաժողովի անդամները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, դիտորդները, վստահված անձինք վերնազգեստի վրա պարտադիր կարգով տեսանելի ձևով պետք է կրեն նիստում ներկա լինելու իրավունքը հավաստող վկայական:

32. Նիստում ներկա լինելու իրավունք ունեցող անձինք կարող են մասնակցել համապատասխան հարցի քննարկմանը միայն նիստը վարողի թույլտվությամբ:

## ԳԼՈՒԽ 5

### ՀԱՆՃՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

33. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա է Հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Նիստը վարում է Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա հանձնարարության կամ բացակայության դեպքում՝ նախագահի տեղակալը:

34. Նիստը սկսվում է օրակարգի հաստատումով: Մինչև օրակարգի հաստատումն այլ հարցեր չեն քննարկվում: Օրակարգի հարցերի վերաբերյալ առարկություն լինելու դեպքում առաջարկությունը դրվում է քվեարկության:

35. Նիստը վարողն ընթերցում է օրակարգի հարցերը, անհրաժեշտության դեպքում տալիս պարզաբանումներ, աշխատանքի արդյունավետությունից ելնելով փոխում օրակարգի հարցերի քննարկման հերթականությունը:

36. Նիստում հարցերը քննարկվում են հետևյալ հաջորդականությամբ՝

- 1) որոշման նախագիծը ներկայացնողի զեկուցում.
- 2) հարցեր զեկուցողին.
- 3) առաջարկություններ.
- 4) ելույթներ՝ մինչև հինգ բուպե, իսկ նիստ վարողը՝ մինչև յոթ բուպե.
- 5) քվեարկություն:

37. Նիստ վարողը՝

- 1) ելույթների համար, ըստ հերթականության, ձայն է տալիս Հանձնաժողովի անդամներին.
- 2) զգուշացումներ է անում սույն կանոնակարգը խախտողներին.
- 3) ուղղում է ելույթներում տեղ գտած փաստական սխալները.
- 4) ձայն է տալիս հրավիրված անձանց, նիստը խանգարելու դեպքում՝ զրկում խոսքից, նիստը խանգարողներին հեռացնում նիստերի դահլիճից:

38. Նիստի ընթացքում արված նոր առաջարկությունները գրանցում է Հանձնաժողովի քարտուղարը:

39. Նիստում յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկությունը կատարվում է հարցի քննարկման ավարտից հետո:

40. Նիստ վարողն ամփոփում է քննարկումը և քվեարկությունից առաջ ներկայացնում որոշման նախագծի վերաբերյալ արված դիտողություններն ու առաջարկությունները:

Դրանք զեկուցողի կողմից ընդունվելու դեպքում հարցը քվեարկության է դրվում՝ հաշվի առնելով արված դիտողություններն ու առաջարկությունները:

41. Առաջարկությունները զեկուցողի կողմից չընդունվելու և առաջարկության հեղինակի կողմից ներկայացված տարբերակը պնդելու դեպքում առաջարկություններն առանձին-առանձին դրվում են քվեարկության: Քվեարկության արդյունքում ընդունված առաջարկություններն ընդգրկվում են որոշման նախագծում, և նախագիծը քվեարկության է դրվում ընդունված առաջարկություններով:

42. Յուրաքանչյուր քվեարկությունից առաջ նիստ վարողը կրկնում է քվեարկության դրվող հարցը՝ ճշգրիտ ձևակերպմամբ, հաշվում և բարձրաձայն հայտարարում կողմ կամ դեմ քվեարկած Հանձնաժողովի անդամների թիվը:

43. Քվեարկությունը կարող է կրկնվել, եթե ինչ-որ կերպ խանգարվել է Հանձնաժողովի որևէ անդամի քվեարկությունը:

44. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են Հանձնաժողովի իրավագոր նիստում՝ բաց քվեարկությամբ: Հանձնաժողովի անդամը քվեարկում է անձամբ՝ կողմ կամ դեմ:

45. Որոշումն ընդունվում է, եթե կողմ է քվեարկել նիստին ներկա հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին, բացառությամբ օրենսգրքով սահմանված դեպքերի:

46. Քվեարկության արդյունքների հիման վրա նիստ վարողը հայտարարում է որոշումն ընդունվելու կամ չընդունվելու մասին:

47. Նիստը համառոտ արձանագրվում է:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՔԱՐՏՈՒՂԱՐ**

**Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ**

**ԿԱՆՈՆԱԿԱՐԳ  
ՏԵՂԱՄԱՍՍՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՃՆԱԺՈՂՈՎԻ**

**ԳԼՈՒԽ 1**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Տեղամասային ընտրական հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կարգով ընտրական տեղամասում կազմակերպում է քվեարկությունը, ամփոփում քվեարկության արդյունքները:
2. Հանձնաժողովը գործում է օրինականության, կոլեգիալության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա:
3. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Մահմանադրությամբ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքով (այսուհետ՝ օրենսգիրք), կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներով և սույն կանոնակարգով:
4. Հանձնաժողովն իր լիազորությունների շրջանակներում ընդունում է անհատական իրավական ակտեր:
5. Հանձնաժողովի նիստերը գումարվում են տեղամասային կենտրոնում:

**ԳԼՈՒԽ 2**

**ՀԱՆՃՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ**

6. Հանձնաժողովի անդամներին նշանակում են համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի անդամները՝ տարածքային ընտրական հանձնաժողովի մեկ անդամ՝ Հանձնաժողովի մեկ անդամ սկզբունքով:
7. Հանձնաժողով կազմավորելու համար տարածքային ընտրական հանձնաժողովի անդամները հայտերն իրենց հանձնաժողովի նախագահին են ներկայացնում քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30 և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն, իսկ արտահերթ ընտրությունների դեպքում՝ քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 20, և ոչ ուշ, քան 18 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն:
8. Հանձնաժողովի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարման կամ դադարեցման դեպքում թափուր տեղը համալրվում է Հանձնաժողովի կազմավորման սահմանված կարգով՝ յոթնօրյա ժամկետում, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան երեք օր առաջ:
9. Հանձնաժողովը նշված կարգով չկազմավորվելու դեպքում Հանձնաժողովի թափուր տեղերը եռօրյա ժամկետում համալրում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը:
- Քվեարկության օրը՝ ժամը 8.00-ին, Հանձնաժողովի անդամների թիվը երկու երրորդից պակաս լինելու դեպքում Հանձնաժողովի նախագահն այդ մասին կապի ցանկացած առկա միջոցի կիրառմամբ ծանուցում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին:
- Տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը մասնագիտական դասընթացներ անցած և որակավորման վկայականներ ստացած անձանց թվից նշանակում է Հանձնաժողովի անդամ՝ հաշվի առնելով վարչատարածքային պատկանելությունը:

10. Հանձնաժողովի առաջին նիստը կայանում է Հանձնաժողովի կազմավորումից հետո՝ երկօրյա ժամկետում, տեղամասային կենտրոնում: Նիստը հրավիրում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը, իսկ վարում է Հանձնաժողովի տարիքով ավագ անդամը:

11. Հանձնաժողովն առաջին նիստում իր կազմից ընտրում է Հանձնաժողովի նախագահ, նախագահի տեղակալ և Հանձնաժողովի քարտուղար:

12. Հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի և Հանձնաժողովի քարտուղարի ընտրություններն անցկացվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի և հանձնաժողովի քարտուղարի ընտրության համար սահմանված կարգով՝ երկօրյա ժամկետում:

13. Եթե Հանձնաժողովը նախատեսված ժամկետում Հանձնաժողովի նախագահ չի ընտրում, ապա համապատասխան Հանձնաժողովի նախագահին նշանակում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը՝ սույն հավելվածի 11-րդ կետով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան երկու օր հետո՝ համապատասխան Հանձնաժողովի կազմից:

14. Հանձնաժողովի անդամներին դրամական փոխհատուցում տրվում է ընտրությունների արդյունքներն ամփոփելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

15. Վերաքվեարկություն անցկացվելու դեպքում Հանձնաժողովի նախագահին, նախագահի տեղակալին, Հանձնաժողովի քարտուղարին կամ Հանձնաժողովի անդամին լրացուցիչ դրամական փոխհատուցում չի տրվում:

Հանձնաժողովի նախագահին, նախագահի տեղակալին, Հանձնաժողովի քարտուղարին կամ Հանձնաժողովի անդամին դրամական փոխհատուցում չի տրվում, եթե նրա լիազորությունները վաղաժամկետ դադարել են:

16. Հանձնաժողովի լիազորությունները դադարում են քվեարկության օրվանից հինգ օր հետո, եթե ընտրության արդյունքները չեն բողոքարկվել: Ընտրության արդյունքները բողոքարկվելու և վերաքվեարկություն անցկացվելու դեպքում Հանձնաժողովի լիազորությունները դադարում են վերաքվեարկության օրվանից հինգ օր հետո:

17. Առանձին ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին նոր որոշում ընդունվելու կամ այդ ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակվելու դեպքում այդ Հանձնաժողովի անդամների լիազորությունները համարվում են վաղաժամկետ դադարած, և նրանք չեն կարող ընդգրկվել վերաքվեարկություն անցկացնող Հանձնաժողովի կազմում: Այս դեպքում Հանձնաժողովը կազմավորվում է առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակվելու մասին նոր որոշում ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանձնաժողովի կազմավորման՝ սահմանված կարգով:

### ԳԼՈՒԽ 3

#### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

18. Հանձնաժողովի նախագահը՝

1) կազմակերպում և ղեկավարում է Հանձնաժողովի աշխատանքները.

2) վարում է Հանձնաժողովի նիստերը.

3) հրավիրում է Հանձնաժողովի արտահերթ նիստ՝ տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով.

4) ստորագրում է Հանձնաժողովի որոշումները, նիստերի արձանագրությունները, Հանձնաժողովի ելից փաստաթղթերը.

5) ապահովում է օրենսգրքով և կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներով նախատեսված պահանջների կատարումը, անհրաժեշտ կարգ ու կանոն հաստատում տեղամասային կենտրոնում.

6) փակցնում է ընտրողների ցուցակի, այդ թվում՝ լրացուցիչ ցուցակների օրինակը, տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում.

7) ստորագրում և կնքում է Հանձնաժողովի կազմած ընտրողների լրացուցիչ ցուցակի յուրաքանչյուր էջ, նշում լրացուցիչ ցուցակում ընդգրկված ընտրողների ընդհանուր թիվը.

8) հայտարարում է քվեարկության սկիզբը և ավարտը.

9) կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով կազմակերպում է տեղամասային կենտրոնի տեղակայման շենքի մոտ գտնվող շարժասայլակով տեղաշարժվող ընտրողի քվեարկությունը.

10) հրապարակում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունը, արձանագրության մեկ օրինակը փակցնում տեղամասային կենտրոնում.

11) հանձնաժողովի կնիքը, դրոշմակնիքը, գրանցամատյանը, քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության երկու օրինակները, ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթը և քվեատուփը ներկայացնում է տարածքային ընտրական հանձնաժողով.

12) իրականացնում է օրենսգրքով և սույն կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

19. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) փոխարինում է Հանձնաժողովի նախագահին նրա հանձնարարությամբ կամ բացակայության ընթացքում.

2) Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ իրականացնում է Հանձնաժողովի նախագահին վերապահված որոշակի լիազորություններ.

3) նախապատրաստում է Հանձնաժողովի նիստերը.

4) ստորագրում է Հանձնաժողովի նիստերի արձանագրությունները.

5) իրականացնում է օրենսգրքով և սույն կանոնակարգով նախատեսված այլ լիազորություններ:

20. Հանձնաժողովի քարտուղարի բացակայության ընթացքում նրա լիազորությունները Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ կարող է կատարել Հանձնաժողովի այլ անդամ:

21. Հանձնաժողովի անդամն իրավունք ունի՝

1) նախապես ծանոթանալու Հանձնաժողովի քննարկմանը ներկայացվող հարցերին և փաստաթղթերին.

2) ելույթ ունենալու Հանձնաժողովի նիստում.

3) ներկայացնելու առաջարկություններ և պահանջելու, որ այդ առթիվ անցկացվի քվեարկություն.

4) նիստի մասնակիցներին տալու հարցեր, ստանալու պատասխաններ.

5) ծանոթանալու ստացված դիմումներին, բողոքներին, գրություններին և մյուս փաստաթղթերին.

6) հայտնելու ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման վերաբերյալ իր կարծիքը:

22. Հանձնաժողովի անդամը պարտավոր է՝

1) կատարել Հանձնաժողովի նախագահի՝ իր իրավասության սահմաններում տված հանձնարարությունները.

2) մասնակցել Հանձնաժողովի աշխատանքներին և կատարել իր լիազորությունները.

3) մասնակցել Հանձնաժողովի նիստերին և քվեարկությանը:

#### ԳԼՈՒԽ 4

#### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ՀՐԱՎԻՐՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

23. Հանձնաժողովների հերթական նիստերը գումարում են օրենսգրքով սահմանված դեպքերում և ժամկետում:

24. Հանձնաժողովի արտահերթ նիստ հրավիրում է Հանձնաժողովի նախագահը՝ տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի պահանջով:

25. Նիստին Հանձնաժողովի անդամների մասնակցությունը նշվում է Հանձնաժողովի գրանցամատյանում, որտեղ յուրաքանչյուրն ստորագրում է իր ազգանվան դիմաց:

26. Նիստերն անցկացվում են տեղամասային կենտրոնում:

27. Նիստերի օրակարգը սահմանված է օրենսգրքով:

28. Քվեարկության նախորդ օրվա նիստում Հանձնաժողովը վիճակահանությամբ որոշում է քվեաթերթիկները ստորագրող հանձնաժողովի երեք անդամների, որոնք պարտավոր են այդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն, կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով ստորագրել բոլոր քվեաթերթիկները:

29. Քվեարկության օրը Հանձնաժողովն անցկացնում է երկու նիստ՝

1) ժամը 7.00-ին, որի ժամանակ Հանձնաժողովը վիճակահանությամբ որոշում է ընտրողների գրանցումն իրականացնող, քվեաթերթիկներ հատկացնող, քվեաթերթիկների կնքման, ինչպես նաև քվեատուփի համար պատասխանատու անդամներին, համապետական ընտրությունների ժամանակ նաև շրջիկ արկղի միջոցով քվեարկություն անցկացնող առնվազն մեկ անդամին և Հանձնաժողովի անդամների՝ երկու ժամը մեկ պարբերականությամբ գործառույթների հերթափոխը:

2) քվեարկության ավարտից հետո՝ ժամը 20.00-ին, որի ժամանակ Հանձնաժողովն սկսում է քվեարկության արդյունքների ամփոփումը:

30. Նիստերին կարող են ներկա լինել՝

1) զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:

2) միջազգային և տեղական դիտորդները:

3) կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների անդամները:

4) յուրաքանչյուր թեկնածուի, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների մեկական վստահված անձ՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

5) թեկնածուն՝ միայն տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման նիստին:

31. Հանձնաժողովի անդամները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները, դիտորդները, վստահված անձինք վերնազգեստի վրա պարտադիր կարգով տեսանելի ձևով պետք է կրեն նիստում ներկա լինելու իրավունքը հավաստող վկայական:

## ԳԼՈՒԽ 5

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԿԱՐԳԸ

32. Հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա է Հանձնաժողովի անդամների կեսից ավելին: Նիստը վարում է Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա հանձնարարության կամ բացակայության դեպքում՝ նախագահի տեղակալը:

33. Նիստում հարցերը քննարկվում և գործառույթներն իրականացվում են օրենսգրքով և կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումներով սահմանված հաջորդականությամբ և կարգով:

34. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են Հանձնաժողովի իրավագոր նիստում՝ բաց քվեարկությամբ: Հանձնաժողովի անդամը քվեարկում է անձամբ՝ կողմ կամ դեմ:

35. Որոշումն ընդունվում է, եթե կողմ է քվեարկել նիստին ներկա հանձնաժողովի անդամների թվի կեսից ավելին, բացառությամբ օրենսգրքով սահմանված դեպքերի:

36. Քվեարկության ավարտից հետո՝ մինչև ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրություն կազմելը, Հանձնաժողովի նիստը չի կարող ընդհատվել:

37. Հանձնաժողովը քվեարկության արդյունքների ամփոփման նիստի վերջում, բայց ոչ ուշ, քան քվեարկության ավարտից տասը ժամ հետո, ավարտում է տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության կազմումը: Արձանագրությունը կազմվում է չորս օրինակից:

ԼԵՈՒՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ



